Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 43

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2009թ. հուլիսի 14-ին ժամը 14:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի նախարար
Գերասիմ Ալավերդյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Վարդան Արամյանը	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդ.

Ռուբեն Խաչատրյանը	«Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամի տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ

Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստին հրավիրված էր.

Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Հակոբ Պետրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար
Արմինե Սիմոնյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի բնապահպանության և սոցիալական ազդեցության գնահատման ծրագրի ղեկավար
Տիգրան Քալանթարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի ենթակառուցվածքներ բաղադրիչի ղեկավար
Մայրոն Հիրնիակը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն տեղակալ
Հիմեշ Դհունգելը	ՀՄԿ Վաշինգտոնյան գրասենյակի՝ ենթակառուցվածքների գծով ղեկավար
Սոնիա Շահրիգյանը	ՀՄԿ Վաշինգտոնյան գրասենյակի՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի կոորդինատոր
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ռիմա Եգանյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Մարինա Քուշքյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակից

Տիգրանուհի Բաղդասարյանը Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացվել էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի դադարեցման վերաբերյալ ՀՄԿ նամակի և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի հետագա քայլերի ներկայացում և քննարկում:
2. Ասֆալտբետոնային և ցեմենտբետոնային ճանապարհային ծածկերի կառուցման ծախսերի վերլուծական համեմատության վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում Այգեզարդի, Շենիկի և Մանթաշի ինքնահոս համակարգերի Վերաբնակեցման գործողությունների պլանների քննարկում և հաստատում:
4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակում նստվածաբանության, բետոնի և ջրի կառավարման մասնագետների կողմից ներկայացված հաշվետվությունների ներկայացում:
5. Այլ հարցեր՝

   ա/ ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի՝ Հանրային խորհրդին ՀՄՀ-Հայաստան ծրագրից դուրս մնացած երեք ինքնահոս համակարգերի վերաբերյալ ուղղված նամակի ներկայացում:

   բ/ ՀՀ-ում եվրոպական ստանդարտների կիրառմանն անցում կատարելու անհրաժեշտության հարցի ներկայացում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ 2009թ. հունիսի 26-ին ՀՄԿ-ն նամակ է ուղղել ՀՀ Նախագահին՝ իրազեկելով ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի դադարեցման մասին: Ներկայացված տեղեկանքում նախանշված են այն քայլերը, որոնք ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պետք է իրականացնի ելնելով ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի դադարեցման փաստից: Հիմնականում խնդիրն առնչվում է ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորված ճանապարհաշինության վեց պայմանագրերին: Անհրաժեշտ է պաշտոնական որոշում ընդունել կնքված պայմանագրերի դադարեցման կամ համապատասխան լիազոր մարմնին փոխանցման մասին: Պաշտոնական որոշման ընդունումից հետո, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը

կտեղեկացնի ՀՄԿ-ին և պայմանագրերի լուծման մասին ծանուցումներ կուղարկի համապատասխան ընկերություններին, իսկ ակտիվները և պարտավորությունները կհանձնի համապատասխան լիազոր մարմնին, կվերանայվի ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառուցվածքը և հաստատումից հետո կուղարկվի ՀՀ Կառավարության աշխատակազմ՝ հաստատման:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հիմք ընդունելով այն փաստը, որ ՀՄԿ-ն դադարեցրել է ճանապարհաշինության հետագա ֆինանսավորումը, հայտնեց որ առաջին հերթին անհրաժեշտ է առկա ակտիվներն ու պարտավորությունները հանձնել համապատասխան լիազոր մարմնի:

Գուրգեն Սարգսյանը նշեց, որ ըստ էության այդ լիազոր մարմինը կարող է լինել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Հայավտոճան» ՊՈԱԿ-ը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ներկայումս ի՞նչ գործունեություն է իրականացնում Հայավտոճանը:

Գուրգեն Սարգսյանը հայտնեց, որ վերջինս իրականացնում է ճանապարհաշինության ոլորտում տարվող աշխատանքների վերահսկողություն, կոորդինացում, ստուգում և երբեմն հանդես է գալիս որպես այդ պայմանագրերի պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության անունից:

Ներսես Երիցյանն առաջարկեց արդեն իսկ անցկացված մրցույթների արդյունքում կնքված պայմանագրերը չդադարեցնել, ֆինանսավորել և շարունակել աշխատանքները:

Արա Հովսեփյանը նշեց, որ նպատակահարմար է նաև շարունակել տեխնիկական վերահսկողության պայմանագիրը, որն իրականացնում է գերմանական Քոքս Քոնսալթ ընկերությունը:

ՀՀ Վարչապետը հետաքրքրվեց, թե ի՞նչ գումարով է կնքվել ճանապարհաշինության տեխնիկական վերահսկողության պայմանագիրը:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ պայմանագրի գումարը 967,340 ԱՄՆ դոլար է, որից 553,802 ԱՄՆ դոլարն արդեն վճարված է: Տեխնիկական վերահսկողությունն իրականացնող կազմակերպությունն իրականացրել է Արմավիր-Իսահակյան-Գյումրի ճանապարհի՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում կառուցվող ճանապարհահատվածի վերհսկողությունը, ինչպես նաև 2008թ. օգոստոս ամսից առ այսօր կատարված աշխատանքների վերահսկողությունը:

Գուրգեն Սարգսյանն առաջարկեց չդադարեցնել ճանապարհաշինության 6 պայմանագրերը և վերջիններս պարզապես փոխանցել Հայավտոճանին՝ հետագա աշխատանքները շարունակելու նպատակով:

ՀՀ վարչապետը հարցրեց, թե առ այսօր քանի՞ կմ ճանապարհի կառուցումն է ավարտված:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ մինչ այժմ ամբողջությամբ ավարտված է միայն Արմավիր-Իսահակյան-Գյումրի ճանապարհի՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում կառուցվող ճանապարհահատվածի շինարարությունը՝ ընդհանուրը 24,5 կմ երկարությամբ, իսկ ճանապարհաշինության Առաջին փաթեթի շրջանակներում ամբողջապես ավարտված հատվածներ չկան:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե այդ ճանապարհների կառուցման համար որքա՞ն գումար է անհրաժեշտ:

Արա Հովսեփյանը նշեց, որ ճանապարհաշինության Առաջին փաթեթում ընդգրկված աշխատանքների ամբողջական իրականացման համար անհրաժեշտ է մոտ 43 մլն ԱՄՆ դոլար, իսկ վերջիններս միայն տրամաբանական ավարտին հասցնելու համար՝ 6.8 մլրդ ՀՀ դրամ:

Վարդան Արամյանը նշեց, որ այս հարցի հետ կապված անհրաժեշտ է իրականացնել մի քանի ֆորմալ քայլեր: Նախ անհրաժեշտ է համապատասխան որոշում ընդունել, հաշվեկշռում առկա ճանապարհների մասով անհրաժեշտ է նորից ինվենտարիզացիա իրականացնել և հաշվառել լիազոր մարմնի հաշվեկշռում: Խնդրեց նաև հանձնարարություն ՀՀ ֆինանսների նախարարությանը, որպեսզի այս գործընթացին մասնակցի նաև ՀՀ ֆինանսների նախարարության վերահսկողության վարչությունը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ անհրաժեշտ է պայմանագրերը դադարեցնել, ինվենտարիզացիա իրականացնել և հանձնել Հայավտոճան ՊՈԱԿ-ին, որից հետո ՀՀ կառավարությունը կորոշի, թե ինչ հետագա քայլեր ձեռնարկել:

Արա Հովսեփյանը խնդրեց պարզաբանել, թե արդյո՞ք պայմանագրերը պետք է դադարեցվեն, թե միայն փոխվում է պայմանագրի կողմը:

ՀՀ Վարչապետը հայտնեց, որ պայմանագրերը անհրաժեշտ է դադարեցնել և հանձնել առկա միջոցները Հայավտոճան ՊՈԱԿ-ին՝ ստանալով համապատասխան հանձնման-ընդունման ակտ:

Պողոս Շահինյանը ներկաներին ի գիտություն հայտնեց, որ 260 կմ ճանապարհահատվածների վրա արդեն իսկ կատարված են հողային աշխատանքները և մասնագետների գնահատմամբ մեկ տարվա ընթացքում աշխատանքները չավարտելու դեպքում վերջիններս կհամարվեն կորած, մինչդեռ այս աշխատանքների իրականացման վրա ծախսվել է մոտ 8 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ Վարչապետը հայտնեց, որ այդ աշխատանքները կատարվելու են, սակայն հարց է, թե երբ: Ներկայումս առկա է ֆինանսավորման խնդիր, եթե հնարավոր լինի գտնել համապատասխան ֆինանսավորման աղբյուր, ապա այդ աշխատանքները ավելի շուտ կիրականացվեն: Ներկայումս առկա է ընդամենը 6.8մլրդ դրամ, որը հնարավորություն կտա ավարտին հասցնել միայն 124 կմ:

Գուրգեն Սարգսյանը նշեց, որ խոսքը գնում է 42-43 մլն ԱՄՆ դոլարի մասին:

Ներսես Երիցյանը հայտնեց, որ ֆինանսական միջոցների ձեռքբերման երեք աղբյուր կա, սակայն բանակցությունները դեռ ավարտված չեն:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ ևս մեկ հարց կա կապված Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի դադարեցման հետ: Խոսքը գնում է ՀՄՀ-Հայաստան ծրագրի միջոցներից Հայավտոճան ՊՈԱԿ-ի համար ձեռք բերված գույքի մասին, որի վերաբերյալ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարը նամակ է ուղղել ՀՀ Վարչապետին՝ խնդրելով այդ գույքը հանձնել Հայավտոճանին՝ ի սեփականություն: Այս հարցը քննարկվել է նաև ՀՄԿ-ի հետ և վերջիններիս դիրքորոշումը միանշանակ չէ: Մասնավորապես՝ ՀՄԿ-ն առաջարկում է Հայավտոճանին տրամադրված տեխնիկան և գույքի մի մասը հանձնել ՁՕԸ-երին, իսկ ավտոմեքենաներից առնվազն մեկը՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին:

ՀՀ Վարչապետը նշեց, որ ՀՀ կառավարությունը մտադիր է ծրագիրն իրականացնել ՀՀ պետական բյուջեի հաշվին և ծրագրի հետագա իրականացումը ներկայումս հանձնվում է Հայավտոճան ՊՈԱԿ-ին, հետևաբար անհրաժեշտ է նաև այդ միջոցները հանձել վերջինիս:

Արա Հովսեփյանը ՀՄԿ ներկայացուցչի խնդրանքով հիշեցրեց, որ ամեն դեպքում ՀՄԿ-ն ունի վերջին խոսքի իրավունք և գույքը Հայավտոճան ՊՈԱԿ-ին հանձնելու մասին որոշումը անհրաժեշտ է նաև համաձայնեցնել ՀՄԿ-ի հետ:

ՀՀ Վարչապետը նշեց, որ դա ի սկզբանե ընդունված մոտեցում է և բոլոր որոշումներն ուղարկվում են ՀՄԿ-ի հաստատմանը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ընդունել ի գիտություն Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի դադարեցումը, հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին դադարեցնելու Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում կնքված պայմանագրերը և հանձնելու առկա ակտիվները և պարտավորությունները ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ին:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ նախքան կառավարման խորհրդի անդամներին ներկայացնելը տվյալ տեղեկանքը քննարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարար պարոն Ներսես Երիցյանի հետ, որից հետո նամակով ուղարկվել է ՀՀ Վարչապետին: Այն պատրաստվել և ներկայացրել է «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի ղեկավար Հակոբ Պետրոսյանը:

ՀՀ Վարչապետը նշեց, որ փաստորեն եթե ՀՀ-ում անցում կատարվի ցեմենտբետոնային ճանապարհների կառուցմանը, ապա 30 տարվա կտրվածքով տնտեսումը կլինի ընդամենը 9%:

Հակոբ Պետրոսյանը հայտնեց, որ տնտեսումը կլինի 9%՝ 4% դիսկոնտ ֆակտորի դեպքում,սակայն արդյունավետվության գործակիցը կլինի 33%, քանի որ ցեմենտբետոնային ճանապարհի նախնական արժեքը 24%-ով թանկ է ասֆալտբետոնային ճանապարհի նախնական արժեքից: Բացի այդ այս գնահատման համար որպես օրինակ վերցվել է 30սմ շերտ ունեցող ճանապարհը, մինչդեռ յուրաքանչյուր դեպքի համար պետք է առանձին հաշվարկ անել, որի արդյունքում տնտեսման տոկոսը հնարավոր է որ աճի:

ՀՀ Վարչապետը նշեց, որ հաշվարկելիս պետք է նաև հաշվի առնվեր մասնագիտական կազմակերպությունների, համապատասխան տեխնիկայի առկայության անհրաժեշտությունը, ինչպես նաև դրա հետ կապված կապիտալ ներդրումների ծավալը, որը մեր երկրում ներկայումս չկա:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց նաև, որ ներկայացված վերլուծությունը բավարար է և մոտակա 3 տարիների ընթացքում նպատակահարմար չէ անցում կատարել ցեմենտբետոնային ճանապարհների կառուցմանը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ի գիտություն ընդունել ասֆալտբետոնային և ցեմենտբետոնային ճանապարհային ծածկերի կառուցման ծախսերի վերլուծական համեմատության վերաբերյալ տեղեկատվությունը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ ՀՀ կառավարության նախորդ նիստում որոշում է կայացվել ինքնահոս համակարգերի կառուցման համար անհրաժեշտ վերաբնակեցման/հողի առգրավման գործընթացների իրականացման համար գումար հատկացնելու վերաբերյալ:
Այս հարցում ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը անմիջական աշխատանք է տանում ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ, որն առաջնորդում է գործընթացը:

Տեղեկատվության ներկայացումից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում Այգեզարդի, Շենիկի և Մանթաշի ինքնահոս համակարգերի Վերաբնակեցման գործողությունների պլանները:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե արդյո՞ք այդ հաշվետվությունները օգտակար են եղել, թե՝ ոչ:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ հաշվետվություններում ներկայացված տեղեկատվությունը օգտակար է եղել և այդ բոլոր հաշվետվությունները ներկայացվել և քննարկվել են ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի հետ: Բաց է մնում ընդամենը մեկ հարց, այն է՝ թե ի վերջո որն է ավելի արդյունավետ՝ կիրառել տորկրետ, թե բետոն, սակայն այս հարցը ներկայացվել է համապատասխան խորհրդատուին և ՀՄՀ-Հայաստանը ակնկալում է վերջնական պատասխան և հիմնավորում:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** ընդունել ի գիտություն «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակում նստվածաբանության, բետոնի և ջրի կառավարման մասնագետների կողմից ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվությունը:

Օրակարգի 5-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի և շահառուների խորհրդի անդամ, «Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ Պողոս Շահինյանը:

Պողոս Շահինյանը տեղեկացրեց, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների խորհրդի նիստում ՇԽ անդամ Լիլիթ Ասատրյանը բարձրացրել էր ծրագրից դուրս մնացած երեք ինքնահոս համակարգերի կառուցման հարցը և ՇԽ-ն համապատասխան նամակով դիմել էր Հանրային խարհրդին: Այդ նամակը քննարկվել է խորհրդի նիստում և ՀՀ Նախագահը դրական արձագանք է տվել Մեղրու ինքնահոս համակարգի վերաբերյալ և նշել է, որ սա ՀՀ առաջնահերթ ծրագրերից է և կա այն դրական մոտեցումը, որ այս ծրագիրը կիրականացվի:

Արա Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ում առկա են Մեղրու ինքնահոս համակարգի նախագծերը, ինչպես նաև համապատասխան տեղեկանք, որում ներկայացված են ինքնահոս համակարգի կառուցման հետ կապված բոլոր հարցերը և դրանց վերլուծությունը, դրական և բացասական հանգամանքները և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը պատրաստ է այդ տեղեկատվությունը անհրաժեշտության պարագայում տրամադրել Հանրային խորհրդին և/կամ այլ հետաքրքրված մարմիններին:

Քննարկումների հետո **միաձայն որոշվեց** ի գիտություն ընդունել ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի՝ Հանրային խորհրդին ՀՄՀ-Հայաստան ծրագրից դուրս մնացած երեք ինքնահոս համակարգերի վերաբերյալ ուղղված նամակը:

Պողոս Շահինյանը բարձրացրեց ևս մեկ հարց, այն մասին, որ փետրվար ամսին կայացած կառավարման խորհրդի նիստի ընթացքում քննարկվել էր Երևան քաղաքի և ՀՀ ճանապարհային երթևեկության ռազմավարությունը, որն ի թիվս այլ միջոցառումների ենթադրում է նաև ճանապարհային երթևեկության խորհրդի ստեղծում: Այդ մասին հետագայում նամակ է ուղղվել ՀՀ Վարչապետին, սակայն վերջնական դիրքորոշումը դեռևս հայտնի չէ:

Գուրգեն Սարգսյանը հայտնեց, որ այդ գրության պատասխանն արդեն տրված է: Նախատեսվում է Համաշխարհային բանկի՝ ճանապարհային երթևեկության անվտանգության

հետ կապված երկու ծրագրի իրականացում, որոնք դեռևս չեն սկսվել, սակայն անվտագության խնդիրները կարևորվում են և նախատեսվում է, որ հետագայում նախագծման աշխատանքներում վերջիններս հաշվի կառնվեն: Սակայն խորհրդի ստեղծման մասին խոսք չկա:

Ներսես Երիցյանը նշեց, որ հոկտեմբեր ամսին կլոր սեղան է լինելու բոլոր միջազգային կառույցների միջոցներով կառուցվող ճանապարհների մասով մեկ ընդհանուր ստանդարտների գալու վերաբերյալ և քննարկվելու է նաև եվրոպական անվտանգության ստանդարտներին անցում կատարելու հարցը:

Պողոս Շահինյանն առաջարկեց ՀՀ Վարչապետին որոշում ընդունելու խորհրդի ստեղծման վերաբերյալ, որը կհանդիսանա համակարգող մարմին, որի հիմնական խնդիրն է կոորդինացնել ճանապարհային երթևեկության խնդիրները:

Ներսես Երիցյանը նշեց, որ ներկայումս առաջարկվում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորել քարտուղարության ստեղծման ծախսերը, որը հետգայում կֆինանսավորվի դոնոր կազմակերպությունների կողմից: Եթե քարտուղարությունը ուժեղ եղավ և լավ համագործակցություն իրականացվեց, ապա խորհուրդը կստեղծվի:

ՀՀ Վարչապետը հանձնարարական տվեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանին ընդունել Պողոս Շահինյանին և գալ ընդհանուր համաձայնության հետագա քայլերի վերաբերյալ:

Օրակարգի 5-րդ հարցի բ/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի և շահառուների խորհրդի անդամ, «Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ Վիկտոր Ենգիբարյանը:

Վիկտոր Ենգիբարյանը նշեց, որ «Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի շրջանակներում դիտարկվում են բոլոր այն սոցիալական և տնտեսական արժեքները, որոնք ստեղծվում են միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում և պարզվում է, որ այդ արժեքները ստեղծվում են տարբեր ստանդարտներով և առաջարկեց, որ այդ խնդիրը հետազոտվի:

Ներսես Երիցյանը հայտնեց, որ բոլոր ստանդարտների մասով ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի հսկողության տակ փորձ է արվում Համաշխարհային բանկից աջակցություն ստանալ: Սա համարվում է բավականին բարդ գործընթաց և Եվրոմիության ազատ առևտրի համաձայնագրի շրջանակներում համար առաջին խնդիրն է որակի համակարգի ստեղծումը, որը գնահատվում է 3-5 տարի և որոշակի տեխնիկական և ֆինանսական աջակցություն է ստացվելու:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ եվրոպական ստանդարներին անցնելու համար ընդամենը անհրաժեշտ է վերցնել այդ ստանդարտները, թարգմանել, հաստատել ՀՀ կառավարության նիստում և պարտադրել, որպեսզի կիրառվի:

Ներսես Երիցյանը հայտնեց, որ անգամ Արևելյան Եվրոպայի երկրները մի քանի պիլիոտային ծրագիր են անում, գնահատում են ծախսատարությունը և ստանդարտների կիրառման հնարավորությունը:

ՀՀ Վարչապետը նշեց, որ անհրաժեշտ է համագործակցել ՀԿ-ների հետ և հանձնարարեց ՀՀ էկոնոմիկայի նախարարին պատրաստել և ներկայացնել ժամանակացույց, թե որ ստանդարտները երբ են հաստատվելու: Միաժամանակ «Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ին առաջարկվեց նախաձեռնել գործընթացը, որպես օրինակ վերցնել ապակիների ստանդարտները և, համագործակցեովլ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ, փորձել անցնել ամբողջ գործընթացը և ներկայացնել հաստատման:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը